ՌԴ-ի տարածքում ռոումինգ ծառայությունների մատուցման պայմանների փոփոխություն

Ռուսաստանի Դաշնության պետական մարմինների կողմից սահմանված կարգավորող սահմանափակումների ներդրման հետ կապված՝ 2025 թվականի հոկտեմբերի 6-ից սկսած, ռուսական կապի օպերատորները ներդնում են պարտադիր 24-ժամյա արգելափակում ինտերնետ և SMS ծառայությունների համար՝ ռոումինգում գտնվող բոլոր բաժանորդների նկատմամբ, ովքեր գրանցվում են ռուսական օպերատորների ցանցերում:

Արգելափակումն ավտոմատ կերպով կիրառվում է ռուսական օպերատորների ցանցում առաջին գրանցման պահից և գործում է 24 ժամ, որից հետո չեղարկվում է:

Եթե արգելափակման չեղարկումից հետո 3 օրվա ընթացքում գրանցված ցանցի SIM-քարտով ակտիվություն չլինի, ապա արգելափակումը կրկին կկիրառվի 24 ժամով: Սահմանափակումները չեն ազդում ձայնային ծառայությունների (հեռախոսազանգերի) վրա, որոնք լիովին հասանելի կմնան՝ անկախ ինտերնետ և SMS ծառայությունների արգելափակումից:

Խնդրում ենք հաշվի առնել, որ 24 ժամվա ընթացքում այլ ցանցին միանալու դեպքում 24 ժամը կհաշվարկվի 0-ից, հետևաբար հարկավոր է Ձեր սմարթֆոնի «Կարգավորումներ» բաժնից ընտրել ցանկալի օպերատորին՝ անջատելով ցանցի ավտոմատ ընտրության հնարավորությունը: